1 (21) 2010

*ՀՏԴ 581.14* *Կենսաբանություն*

# ԱՍՏՂԻԿ ՍՈՎՈՐԱԿԱՆԻ ԱՃԻ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՎԵԳԵՏԱՏԻՎ ԶԱՆԳՎԱԾԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ

*Մ.Ս. Ծատրյան*

Աստղիկ սովորականը ԼՂՀ-ում ամենատարածված և գործածական խոտաբույսերից է , որն ունի օգտագործման մեծ նշանակություն արցախյան «Ժենգյալով հացի» մեջ: Աստղիկ սովորականը միամյա բույս է, աճում է մարգագետիններում, ստվերոտ խոնավ վայրերում: Տերևները հակադիր են, ձվաձև կամ գծանշտարաձև, ծաղիկները՝ մանր, սպիտակ: Ծաղկում է մայիսին: Պտուղը գնդաձև կամ ձվաձև տուփիկ է, սերմերը՝ կլորավուն կամ երիկամաձև: Դեղաբույս է. պարունակում է C, E վիտամիններ, կարոտին /A նախավիտամին/: Աստղիկ սովորականի սերմանյութը մեր կողմից հավաքվել է արշավախմբային հետազոտական աշխատանքների ժամանակ /2009թ/, որն ընդգրկել է Ասկերանի շրջանի Խնապատ գյուղը /որն ունի ծովի մակերևույթից 580-730մ բարձրություն/: Սերմերը աշնան վերջերին ցանվել են մարգերում: Գարնանը կատարվել են ֆենոլոգիական դիտումներ, իսկ արդյունքները գրանցվել աղյուսակ 1-ում:

Աստղիկ սովորականի ֆենոլոգիական դիտումների արդյունքները, 2010թ

*Աղյուսակ 1*

| | | |
|---|---|---|
| Էկոխումբը | Խնապատի | |
| Ֆենոփուլը | Աշնան ցանք | |
| Ցանք | 20.11 | |
| 1-ին իսկական տերևի առաջացում | 20.02 | |
| 2 զույգ տերևի առաջացում | 25.02 | |
| 4 զույգ տերևի առաջացում | 27.02 | |
| 6 զույգ տերևի առաջացում | 1.03 | |
| 10 զույգ տերևի առաջացում | 6.03 | |
| 1-ին կարգի ճյուղերի առաջացում | 9.03 | |
| 2-րդ կարգի ճյուղերի առաջացում | 15-17.03 | |
| 3-րդ կարգի ճյուղերի առաջացում | 23.03 | |
| Ծաղկում | Սկիզբ | 2.04 |
| | Վերջ | 18.05 |
| Սերմերի հասունացում | Սկիզբ | 7.05 |
| | Վերջ | 5-10.07 |

Ինչպես նկատելի է աղյուսակ 1-ից, աստղիկի առաջին իսկական տերևները ձևավորվում են փետրվարի երկրորդ կեսին, 4 զույգ տերևները կազմակերպվում են փետրվարի 27-ին: Նկատելի է, որ փռյանցումը /տերևառաջացումը/ արագ է ընթանում: Այս հասակում բույսերն ունեն փոքր տերևային մակերես 5սմԱ /Աղյուսակ 2/: 10 զույգ տերևի կազմակերպումից բույսը սկսում է տարածության մեջ երեք տարբեր կողմեր շարժվել: Դա համընկնում է մարտի կեսերին: Մարտի 15-17-ից մինչև 23-ը, երբ աստղիկի վրա ձևավորվում են 2-րդ և 3-րդ կարգի ճյուղեր, բույսերն օգտագործվում են սննդի մեջ: Այս փուլերում է, որ աստղիկի բույսերը ձևավորում են իրենց ամենամեծ տերևային մակերեսները /53-88սմԱ/: Բույսի կշիռը տատանվում է 7-15գ: Ցողունի միջին երկարությունը 42սմ է: Կոկոնակալումը կամ ծաղիկների առաջացումը ընթանում է ամբողջ վեգետացիայի ընթացքում, քանի որ յուրաքանչյուր նախորդ ցողուն , որն ավարտվում է ծաղիկներով, սկիզբ է տալիս հաջորդ կարգի ցողունների, որոնք նույնպես ավարտվում են նոր ծաղիկներով:Այսպիսով առաջին ծաղիկների կազմակերպումից մինչև վեգետացիայի ավարտը կարող է շատ երկարել:

Աստղիկի կենսաչափական որոշ տվյալներ, 2010թ.

*Աղյուսա*

| Ֆենոփուլը | Էկոխումբ<br>Ցանքի ժամկետը<br>Ցուցանիշը | Խոնավասերի<br>աշնան ցանք |
|---|---|---|
| 2 զույգ տերևի առաջացում | տերևային մակ.,սմԱ | 2 |
| | արմատ երկ.,սմ | 1 |
| | ցողունի երկ.,սմ | 5 |
| Գլխավոր ցողունը կազմված՝ | | |
| 4 զույգ տերևից | տերևային մակ.,սմԱ | 5 |
| | արմատ երկ.,սմ | 1.3 |
| | ցողունի երկ.,սմ | 9 |
| 8 զույգ տերևից | տերևային մակ.,սմԱ | 11 |
| | արմատ երկ.,սմ | 2.5 |
| | ցողունի երկ.,սմ | 15 |
| 2-րդ կարգի ճյուղերի առաջացում | տերևային մակ.,սմԱ | 53 |
| | արմատ երկ.,սմ | 9 |
| | ցողունի երկ.,սմ | 30 |
| | բույսի ընդհ.կշիռ., գ | 7 |
| | ճյուղ. թիվ. հատ | 7 |
| Ծաղկում | տերևային մակ.,սմԱ | 102 |
| | արմատ երկ.,սմ | 20 |
| | ծաղիկների թիվ.հատ.1 ճյուղից | 80 |
| | ճյուղերի թիվ. հատ. | 168 |
| Սերմի հասունացում | սերմի. թիվ. 1 ծաղկից., հատ | 11-15 |

*Գրականություն*

1.В.С. Новиков, И.А.Губанов, Атлас определитель, дикорастущие растения, М, 2008, с.166.
2.И.И. Полянский, Ботанические экскурсии, М,1968, с. 135.

*Резюме*

В этой статье представлены данные, касающиеся роста, развития и вегетативной массы звездчатки обыкновенной, прорастающей на территории НКР.